ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 16.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/35

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Մեդիսար» ՍՊԸ-ի 03.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/35 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մեդիսար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 03.10.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) իր կարիքների համար քիմիական նյութեր ձեռքբերելու նպատակով ս.թ. հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի սեպտեմբերի 14-ին: Հայտարարությամբ սահմանվել է, որ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ն: Սահմանվել է նաև, որ հայտերի բացումը տեղի կունենա

էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 14:00-ն:

Ընկերությունը հայտնել է, որ նպատակ ունենալով մասնակցել Պատվիրատուի կողմից կազմակերպված ընթացակարգին ս.թ. սեպտեմբերի 21-ին ժամը 12:00-ի սահմաններում փորձել է մուտք գործել էլեկտրոնային գնումների armeps համակարգ և ներկայացնել հայտ: Սակայն համակարգում նշված գնման ընթացակարգն այլևս ակտիվ չէր և հնարավոր չէր դրան մասնակցել և ներկայացնել հայտ: Ենթադրելով, որ համակարգն է խափանվել, առաջացած խնդրի վերաբերյալ Ընկերությունը պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել է Պատվիրատուին, որի արդյունքում պարզվել է, որ համակարգը խափանված չէ և ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 21.09.2017թ. ժամը 11:00-ին: Պատվիրատուից աշխատանքային կարգով ստացված տեղեկատվությունից պարզվել է նաև, որ էլեկտրոնային գնումների armeps համակարգում հրապարակված հայտարարությամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետը և հայտերի բացումը սահմանվել է 21.09.2017թ. ժամը 11:00-ին: Տեղ գտած անճշտությունները հարթելու և բոլոր կազմակերպությունների իրավունքները չխախտելու, հավասար մոտեցում ցուցաբերելու ողջամիտ տարբերակը ընթացակարգը չկայացած հայտարարելը կլիներ, մինչդեռ՝ Պատվիրատուն շարունակում է գնման գործընթացը:

Ընկերությունը գտնում է, որ արդյունքում խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված «Մեդիսար» ՍՊԸ-ի իրավունքները, «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) սահմանված նպատակները, սկզբունքները, գնումներին մասնակցելու հավասարությունը:

Միաժամանակ Պատվիրատուն, շարունակելով գնման գործընթացը, գործում է ոչ իրավաչափ հետևյալ հիմնավորմամբ՝

Օրենքի՝

3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում,

3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն,

7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք,

16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը,

22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն չորս աշխատանքային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ հրավերը նախաորակավորված մասնակիցներին տրամադրելու օրվանից,

27-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտեր ներկայացնելու ձևի, տեղի և ժամկետի, իսկ նույն մասի 11-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման ձևի, վայրի, օրվա և ժամի վերաբերյալ տեղեկություններ,

33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի.

1-ին կետի համաձայն՝ դրանով կարգավորվում են էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հարաբերությունները,

3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները,

7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը, գնումներին մասնակցելիս, իրավունք ունի էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հայտ,

14-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն նույն կարգի համաձայն գնում կատարելու համար համակարգում հրապարակում է գնման ընթացակարգի մասին հայտարարության և հրավերի տեքստերը՝ դրանք նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում,

15-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվող գնման հայտարարությունը և հրավերը պարտադիր պարունակում է տեղեկատվություն տվյալ գնման ընթացակարգը՝ էլեկտրոնային եղանակով իրականացման, ինչպես նաև հայտերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238-Ա հրամանով հաստատվել են էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման հայտարարության և հրավերի օրինակելի ձևերը, որի հայտարարության տեքստով սահմանվել է հայտերի ներկայացման վերջնաժամկետի ինչպես նաև հայտերի բացման ժամկետի վերաբերյալ տեղեկություններ պարունակելու պահանջ:

Վիճարկվող գնման ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուն 14.09.2017թ. հրապարակել է «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով իրականացվող գնանշման հայտարարություն և հրավեր: Հայտարարությամբ սահմանվել է հետևյալը՝

- այն հրապարակվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն և ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 24-ի N 238-Ա հրամանին համապատասխան,
- գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը ժամը 14:00-ն,

• գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14-ն,

• հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 14:00-ն:

Հայտարարությունը հրապարակվել է 14.09.2017թ., հետևաբար հայտերի ներկայացման վերջնաժամկետը կլինի այդ օրվանից հաշված 7-րդ օրվա՝ ս.թ. սեպտեմբերի 21-ին ժամը 14:00-ին: Հատկանշական է, որ ճիշտ նույնական ժամկետներ են նշվել նաև Հայտարարության ռուսերեն և անգլերեն լեզուներով տեքստերում:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ցանկություն ունենալով մասնակցել գնանշման հարցմանը և չպատկերացնելով, որ հայտարարությունում հնարավոր է նշված լինի սխալ ժամկետ, 21.09.2017թ. ժամը 12:00-ի սահմաններում փորձել է էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացնել հայտ, սակայն գնման ընթացակարգն ապաակտիվացված և անհասանելի է եղել հայտեր ներկայացնելու համար: Պատվիրատուի այն պնդումը, թե էլեկտրոնային գնումների armeps համակարգում հրապարակված հայտարարությամբ նշվել է ժամը 11:00-ն և հարկավոր էր առաջնորդվել դրանով, լիովին անհիմն է մի քանի նկատառումներով՝

1) էլեկտրոնային գնումների armeps համակարգում հրապարակված հայտարարությամբ սահմանված ժամկետը պետք է չտարբերվեր տեղեկագրում հրապարակված ժամկետից:

2) էլեկտրոնային գնումների armeps համակարգում հայտարարությունը հրապարակվել է 13.09.2017թ., հետևաբար սահմանված յոթնօրյա ժամկետը լրանում էր 20.09.2017թ., մինչդեռ՝ հայտերը բացվել են 21.09.2017թ., ինչն ինքնին նույնպես չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը: Հակառակ դեպքում ստացվում է, որ պատվիրատուները գնումների ընթացակարգերին կազմակերպությունների մասնակցությունը սահմանափակելու հզոր գործիք ունեն և կարող են տարբեր հայտարարություններում հայտերի ներկայացման իրական ժամկետից տարբերվող՝ ավելի երկար ժամկետ նշել:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից կոպտորեն խախտվել են վերոհիշյալ իրավական ակտերի դրույթները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված Ընկերության իրավունքը և արդյունքում հնարավոր է գնանշման հարցմանը մասնակցելու իրավունքից զրկվել է ոչ միայն «Մեդիսար» ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 50-րդ հոդվածով «Մեդիսար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝ Պատվիրատուին /«ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովին պարտավորեցնել ընդունելու էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով քիմիական նյութեր ձեռք բերելու նպատակով կազմակերպված «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.10.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր ներկայությունը, ինչպես նաև իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են 03.10.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ի պատասխան Խորհրդի 04.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/17924-17 գրության՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն 05.10.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշում:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը

2017թ. սեպտեմբերի 13-ին հրապարակվել է էլեկտրոնային գնումների armeps /www.armeps.am/ էլեկտրոնային համակարգում: Ընթացակարգի բացման օր և ժամ ֆիքսվել է 2017թ. սեպտեմբերի 21-ը ժամը 11:00-ն: Նույն օրը և ժամը որպես հայտերի վերջնաժամկետ տեղադրված է եղել նաև www.gnumner.am տեղեկագրում, որը ևս հասանելի է բոլոր մասնակիցներին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ Ընթացակարգի հայտարարությունը տեղադրվել է էլեկտրոնային տարբերակով, որին կցված է եղել թղթային տարբերակը: Էլեկտրոնային տարբերակի մեջ որպես հայտերի վերջնաժամկետ նշված է եղել 2017 թվականի սեպտեմբերի 21-ը ժամը 11:00-ն, սակայն կցված թղթային տարբերակի մեջ տեղի է ունեցել վրիպակ, այն է՝ որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ նշված է եղել 2017 թվականի սեպտեմբերի 13-ից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ն, այն է՝ սեպտեմբերի 20-ը՝ ժամը 14:00-ն:

Ամփոփելով վերագրյալը, Պատվիրատուն պնդել է, որ որևէ կերպ չեն սահմանափակվել մասնակիցների իրավունքները և վերջիններիս գնումներին մասնակցելու հավասարությունը:

Որպես վերը նշվածի հիմնավորում Պատվիրատուն հայտնել է, որ եթե մասնակիցը որպես բացման օր ֆիքսել է armeps.am էլեկտրոնային համակարգում նշված «21» սեպտեմբերի ամսաթիվը, ապա ամսաթվից հետո նշված ժամը 11:00-ն նույնպես պետք է նկատեր, մինչդեռ՝ բողոքաբերը ֆիքսել է էլեկտրոնային հրապարակման ամսաթիվը և թղթային տարբերակի ժամը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ինչ վերաբերում է մասնակցի այն պնդմանը, որ կայացված ընթացակարգը պետք է չկայացած հայտարարել, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը սահմանում է՝

1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքը չի բխում օրենքի պահանջից, այն չի կարող վերը թվարկված դրույթներից որևէ մեկին վերագրվել:

Ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքում կխախտվեն մնացած երեք մասնակիցների իրավունքները, ովքեր առաջնորդվելով երկու պաշտոնական կայքերի հրապարակումներով՝ ժամանակին մասնակցել են ընթացակարգին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպատակները, սկզբունքները, գնումներին մասնակցելու հավասարությունը «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից որևէ կերպ չի խախտվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.10.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերը նշված գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի հայտարարության մասում նշվել է, որ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ն: Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 14:00-ն:

3. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.2 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու

օրվանից հաշված «7»-րդ օրվա ժամը 11:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը www.gnumner.am համակարգում հրապարակվել է 14.09.2017թ. և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է նշվել 21.09.2017թ. ժամը 11:00-ն ներառյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ 11 348 200 ՀՀ դրամ:

6. Նույն արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է հատեր ներկայացրած երեք մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Մեդիսար» ՍՊԸ-ի 03.10.2017թ. ներկայացրած բողոքը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 05.10.2017թ. գրությունը, «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

14) **տեղեկագիր՝** սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիոյուն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: ***Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին***:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝

- 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

- 83-րդ հոդվածի համաձայն՝ ***եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:***

ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 386-Ն որոշման 14-րդ կետի համաձայն՝ ***պատվիրատուն սույն կարգի համաձայն գնում կատարելու համար համակարգում հրապարակում է գնման***

ընթացակարգի մասին հայտարարության և հրավերի տեքստերը՝ դրանք նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում:

Այսպիսով, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը www.gnumner.am համակարգում հրապարակվել է 14.09.2017թ. և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է նշվել 21.09.2017թ. ժամը 11:00-ն ներառյալ:

Ընթացակարգի հրավերը www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակվել է 13.09.2017թ.:

Մինչդեռ՝ Ընթացակարգի հրավերի հայտարարությամբ սահմանվել է. որ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 14:00-ն: Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 14:00-ն:

Միաժամանակ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.2 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «7»-րդ օրվա ժամը 11:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

«Մեդիսար» ՍՊԸ-ն 03.10.2017թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ցանկություն ունենալով մասնակցել գնանշման հարցմանը և չպատկերացնելով, որ հայտարարությունում հնարավոր է նշված լինի սխալ ժամկետ 21.09.2017թ. ժամը 12:00-ի սահմաններում փորձել է Ընթացակարգին մասնակցելու նպատակով էլեկտրոնային armeps համակարգի միջոցով հայտ ներկայացնել, սակայն գնման ընթացակարգն ապաակտիվացված և անհասանել է եղել՝ հայտեր ներկայացնելու համար:

Բողոքի քննության նպատակով 06.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի հայտարարության մասում տեղի է ունեցել վրիպակ, այսինքն՝ սխալ է նշվել հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

Վերջինս հայտնել է նաև, որ Ընթացակարգի հրավերը www.gnumner.am համակարգում հրապարակվել է 14.09.2017թ. և հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է նշվել 21.09.2017թ. ժամը 11:00-ն, իսկ www.armeps.am էլեկտրոնային համակարգում Ընթացակարգի հրավերը հրապարակվել է 13.09.2017թ., այնուհետև www.armeps.am էլեկտրոնային համակարգում կատարվել է փոփոխություն և հայտերի ներկայացման վերջնաժամկետը համապատասխանեցվել է www.gnumner.am համակարգում նշված վերջնաժամկետին, այն է՝ 21.09.2017թ. ժամը 11:00-ն:

Նիստի ժամանակ Խորհուրդն արձանագրել է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերում համապատասխան փոփոխություն չի կատարել և հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հրավերի հայտարարության մասում մնացել է 7-րդ օրվա ժամը 14:00-ն, որը և Ընկերությունը հիմք էր ընդունել երբ ցանկացել էր 21.09.2017թ. ժամը 12:00-ի սահմաններում հայտ ներկայացնել:

Խորհրդի այն հարցին թե Պատվիրատուն ինչ սկզբունքով է առաջնորդվել հայտերը բացելով 21.09.2017թ., քանի որ այն համարվել է ոչ աշխատանքային օր, ի պատասխան՝ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ հայտերի բացումը տեղի է ունեցել 22.09.2017թ. ժամը 11:00-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին***:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ 83-րդ հոդվածի համաձայն՝ ***եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:***

Ամփոփելով վերը նշված փաստերը և փաստական հանգամանքները՝ Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-

րդ հոդվածով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, նույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 386-Ն որոշման 14-րդ կետով սահմանված պահանջների խախտմամբ, որի արդյունքում սահմանափակվել է «Մեդիսար» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը, մասնավորապես՝ եթե հայտերի բացման օրը՝ այն է 22.09.2017թ. ժամը 11:00-ն, համընկներ դրանք ներկայացնելու վերջնաժամկետին, ապա «Մեդիսար» ՍՊԸ-ն՝ ցանկանալով 21.09.2017թ. ժամը 12:00-ի սահմաններում հայտ ներկայացնել, չէր զրկվի այդ իրավունքից:

Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 03.10.2017թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ դադարեցնել գնանշման հարցման հանձնաժողովի «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեքստը հաստատելու մասին 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 2 որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ այն հրապարակելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ